

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, ՅՈՒՆՈՒԱՐ 25, 1930

ԹԻԻ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԳՐԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏ ԿՌՈՒՄՆԸ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ս. ԳԻՐԲԸ ԻԲՐ ԿՐԹԻԶ ԱԶԴԱԿ

ՎԵՐ. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՐՀԸ

ՏՈՐԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

Ս. ԳՐԲԻ ՀԵՂԻՆԱԿԸ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՒԷՃ» ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, կրթական գիտական պարբերաթերթ.
Տէր և Տնօրէն Վեր. Կ. Յ. Յարութիւնեան
Պատասխանատու խմբագիր Տ. Ճ. Խլլորեան

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԷ՛ “ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”, Ի.

ՏԱՐԱԾԷ՛ “ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”, Ը,

ԾԱՆՈԹԱՑՈՒՐ “ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”, Ը,

ՆՈՒՐԷ՛ “ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”, Ը

ԳՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒԴ.

Տարեկան բաժնեգինն է Սուրիոյ համար 1.50 սուրիական ոսկի (քղքադրամ), արժանահմանի համար 1.50 տլար: Մեկէ աւելի բաժանորդագրութեանց համար մասնաւոր զեղչ. պայմանները հասկնալու համար դիմել հետեւեալ հասցեին.—

“NOR AVEDAPER”, B. P. 287, Alep, Syrie
ՎԵՑԱՄՍԵԱՅ ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶՐՆԴՈՒՆՈՒՐ.

ՎՃԱՐԷ՛

ԵԹԷ ՊԱՐՏԻ ՈՒՆԻՍ

«ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ»-Ի

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆՔԻ, ՅՈՒՆՈՒԱՐ 25, 1930

ԹԻԻ 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏ ԿՌՈՒԱՆԸ

Ներկայ կեանքը, գրեթէ ամէն տեղ, քառասան վիճակ մը կը ներկայացնէ: Ընկերային բոլոր հաստատութիւնները, — եկեղեցի, դպրոց, ընտանիք, կոոս-վարութիւն, առևտուրը-զօրաւոր ցնցու-մի մը ենթարկուած են, որ շատ մը տե-ղեր սարսափելի հիմնայատակ փրկուած-ներ, և ընդհանրապէս ամէն տեղ աչքա-ռու աւերումներ յառաջ բերած է: Քան-զի այն գաղափարները, որոնց մարմնա-ցումն են յիշեալ ընկերային հաստատու-թիւնները, արմատական փոփոխութիւն-ներու ենթարկուած են: Գիտական նոր տեսութիւններ և գիւտեր, տնտեսական նոր պայմաններ ամբողջ աշխարհ մը քանդած և մարդերը անորոշութեան մէջ ձգած են, տակաւին անկարող ըլլալով նոր աշխարհի հաստատ հիմը դնելու:

Երբ մեր գիտակը կրօնական մարդին ուղղենք նոյն երևոյթը աւելի ցայտուն կերպով կը ներկայանայ մեր աչքերուն:

Կրօնական կեանքի մասին աւանդա-կան գաղափարները, սովորութիւնները, դաւանանքները անեղ ցնցում մը կրած են յետպատերազմեան կարճ շրջանին մէջ:

Ձեռմահաւատացեալը կատարեալ շփո-թութեան մատնուած է իր ականջին հա-սած նոր գաղափարներուն պատճառաւ:

Ճշմարտութիւնը խուզարկող անկեղծ հոգին այսօր մութին մէջ կը խարխափի զիրար հակասող, ժխտող ամէն տեսակ գաղափարներու առջև, որոնց իւրաքան-

չիւրը յաճախ իբր անփոփոխելի բացար-ձակ պատգամներ կը ներկայացուն:

Ս. Գրքի մասին, աղօթքի, փրկու-թեան, Աստուած յայտնութեան, անդե-նական աշխարհի կեանքի մասին և ըն-կալեալ դաւանանքներու մասին տարբեր յարանուանութեանց, տարբեր գաղա-փարային դպրոցներու պատկանող ան-հատներու կողմանէ յայտնուած, պաշտ-պանուած, իրարու հակառակող կարծիք-ները անորոշութեան տանջարանի մը մէջ բանտած են ճշմարտասէր հոգին: Այսօր աւելի քան երբեք մարդիկ կը կարօտին այնպիսի պատգամի մը որ բացարձակ ու-րոշութեան դրոշմը կրէ, ամէն մէկ ան-հատ այսօր կը կարօտի այնպիսի ամուր հիմի մը, որուն վրայ կարենայ վստահօ-րէն կերտել իր կեանքին շէնքը: Ո՞րն է հաստատ կռուանը մեր հոգեւոր կեան-քին: Քրիստոնեային համար այս հաս-տատ, այս բացարձակապէս որոշ հիմն է իր առ Աստուած ունեցած յարաբերու-թիւնը: Հոգեւոր կեանքի մէջ չկայ աւե-լի զօրաւոր համոզում մը քան հոգիին մէջ Աստուծոյ ներկայութեան գիտակ-ցութիւնը, չկայ աւելի անխախտ կռուան մը քան Յս. Քրիստոսով փրկութիւնը, չկայ աւելի որոշ գիտութիւն մը քան Ս. Հոգեով մկրտութեան փորձառութիւնը: Այն որ զուրկ է ասիէ, զուրկ է պէտք ե-ղած լոյսէն, հետեւաբար ենթակայ միշտ խարխափելու անորոշութեան մէջ: Բայց այն որ կայնած է այս հաստատ հիմի վը-րայ՝ գաղափարային և ոչ մէկ հոսանք կարող չէ ցնցել զայն:

ՇՈՂԵՐԱՂՕԹՔԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Հուտերական քարոզիչ Փօլ Կէր-հարտի մասին կը պատմուի թէ իր եւ թաղաւորին միջեւ գտնուած կրօնական տարբերութիւններու պատճառաւ իր հայրենիքէն հեռանալու հրամանը ընդունից։ Նեղ պայմաններու տակ ինքը եւ իր սիրելի կիներ սկսան հետիտան ճամբորդել։ Գիշեր մը պանդոկ մը հասան։ Կինը յոգնած եւ վհատած սկսաւ լալ։ Իր էրիկին սիրտինքը չկրցան արգիլել իր արցունքին հոսումը։ Կէր հարտ պանդոկին պարտէզը գնաց, ուր դաւորապարզ հովանիի մը տակ սկսաւ աղօթել։ Հոս կ'զգայ թէ Աստուած կերպով մը պիտի օգնէ իրենց։ Նոյն գիշեր ձիաւորներ պանդոկ եկան հարցնելու թէ Հուտերական քարոզիչը հոս է։ «Մենք», ըսին անոնք, «եկած ենք Քրիստիանոս դուքսին կողմանէ, որ կը փափաքի ձեզի իր համակրանքը յայտնել ձեր ներու-թեան եւ հաւածանքին մէջ եւ ձեզ Մեքսիկայի կը հրաւիրէ հոն հաստատուելու համար»։ «Փառք Աստուծոյ», կանչեց քարոզիչը. եւ փութաց բարի լուրը հաղորդել իր կնոջ։

ԶՕՐԱՎԱՐԸ ԵՒ ՇՐՋԻԿ ՊՏՂԱՎԱՃԱՌԸ

Պրօմուէլ Պոթհ, Փրկութեան Բանա-կի հանգուցեալ զօրավարը, կը պատմէ. «Մեզի կատարելապէս անծանօթ մէկը, օր մը մեզ այցելեց մեր կեդրոնը, եւ ըսաւ. «Կ'ուզեմ Պր. Պոթհը տեսնել»։ Ինծի ներկայացուեցաւ մարդը, եւ իր անունը յայտնելէ ետքը ըսաւ. «Ես ձեր գործունէութեամբ շատ հետաքրքրուած եմ, եւ կ'ուզեմ հազար ոսկի տալ ձեզի»։ Իրեն հարցուցի թէ ինչպէս պատահեցաւ որ ինք մեզմով հետաքրքրուիլ սկսաւ։ «Լաւ, ձեզի պատմեմ։ Ատեն մը առաջ երբ էլտըրսկէյթ փողոցէն կ'անցնէի,

տեսայ որ փերեզակ մը երկաթի կտոր-ներով լեցուն պարկերը իր սայլակին վը-րայ կը բեռնէր։ Պարկերէն մէկը կը երևի թէ իրեն շատ ծանր եկաւ, եւ չկը-ցաւ վերցնել, անմիջապէս մետաքսէ գլխարկով երկայնահասակ մարդ մը կանգ առաւ, պարկը վերցուց եւ փերե-զակին բառ մը ըսաւ։ Այնչափ հեռա-քըրքրուեցայ որ անմիջապէս ոստիկա-նին հարցուցի թէ ան ո՞վ է։ «Ո՛հ, չէ՞ք գիտեր զայն», ըսաւ ոստիկանը, «Զօրա-վար Պոթհն է ան»։ «Լաւ», ըսի ինք-նիրենս, «եթէ Փրկութեան Բանակին ո-գին այս է, ես պիտի օգնեմ անոր երբ առիթը ունենամ»։

ԱՂՋԿԱՆ ՄԸ ԳԱՂՏՆԻՔԸ

Հէնրի Տրմընտ մանկամարդ օ-րիորդի մէ մասին կը պատմէ, որուն նկարագրին կատարեալ շնորհը գինքը ճանչցողներուն հիացում պատճառած էր։ Այս աղջիկը իր վիզէն մետաղիոն մը կա-խած էր, զոր չէր թողուր որ ոեւէ մէկը բանայ։ Օր մը, անսովոր մտիմախան մէկ վայրկեանին, թոյլ տուաւ որ իր նե-կերուհիներէն մէկը անոր զսպանակին դպչի եւ անոր գաղտնիքին տրտնայ։ Ընկերուհին սա բառերը գրուած գտաւ հոն։ «Անոր՝ զոր առանց տեսած ըլլա-լու կը սիրեմ»։ Ահա այս էր իր գեղեցիկ կեանքին գաղտնիքը, եւ այս եղած է նա-եւ քրիստոնեայ կեանքին գաղտնիքը։

ՈՒՍԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Միսիօնար մը աւետարանչական շրջա-նի մը համար պատրաստուելու ատեն կամաւոր գործակիցներ խնդրեց բնիկ-ներէն։ Յանկարծ ոսկրոտ մարդ մը ոտք ելլելով ըսաւ. «Ես չեմ կրնար քա-րոզել, բայց զօրաւոր ուսեր, լաւ կրո-նակ մը եւ սրունքներ ունիմ, զորոնք կը նուիրեմ Տիրոջ ծառայութեան համար»։ Իբր նոր կիւրէնեցի Սիմոն մը Քրիստոսի բռնը կրեց վեց շաբաթ։

Տէր ,

Հաճեցէք զիս «Նոր Աւետարներ»ի իբր բաժանորդ
արձանագրել . . . Տարուան համար

. . . Հայերէն

. . . Տաճկերէն

որուն համար կը ներփակեմ . . . Տոլար

. . . Սուր . Լիրա ,

եւ կը խնդրեմ որ ընդունիք ներփակեալ . . . գումարը
(Զեր յարմար տեսած հասցէներուն) կամ հետեւեալ հասցէնե-
րուն «Նոր Աւետարներ» ղրկելու համար .—

1

.

.

2

.


.

Ստորագրութիւն

Անուն եւ մականուն

Փողոց եւ տան թիւ

Քաղաք եւ երկիր



307ՈՒԱԾՆԵՐ

Ս. ԳԻՐԲԸ ԻԲՐ ԿՐԹԻՉ ԱԶԴԱԿ

1. ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ Մ՝ 2

Գրեց Վեր. Կ. Յ. Յարությանեան

Ս. Գրքի պարունակութիւնը կը կազմեն արձանագրութիւններ, պատմութիւն, օրէնք, մարգարէութիւն, ճառեր եւ քարոզներ, գրաւիչ եւ իմաստալից կենսագրականներ, ընդարձակ եւ թանկագին նամակներ, շատ նշանակալից սաղմոսներ եւ երգեր, առակներ, խօսակցութիւններ ևայլն, որոնք տարբեր լեզուներով, հազար տարուան միջոցին, տարբեր տեղերու եւ պայմաններու մէջ եւ տարբեր դասակարգելէ մարդոց կողմանէ գրուած են:

Կարգ մը կէտեր կ'ուզենք ընթերցողներու ուշադրութեան ներկայացնել մտաւորական մարզին մէջ աշխարհիս կրթութեան մասին Ս. Գրքի կատարած ծառայութիւնները տեսնելու համար: Անկիս միտքը կը գրգռէ քննելու եւ խուզարկելու համար: Ասիկա կը կատարէ ուղղակի եւ անուղղակի կերպերով: «Գիրքերը քննեցէ՛ք», կ'ըսէ Յիսուս (Յովհ. 5. 39): Ազնիւ կոչուած են այն մարդերը, որոնք «ամէն օր կը քննէին թէ այս բաները այսպէ՞ս են» (Գործք. 17. 11): Այս գիրքը կազմող մասերուն մեծամասնութեան հեղինակները, անոնց խմբագրութեան տեղն ու ժամանակը անծանօթ թողուած են: Զոր օր., Ս. Գրքի մէջ բացայայտ ծանօթութիւն մը չկայ թէ Հին Կտակարանի առաջին հինգ գիրքերը ե՞րբ, ու՞ր եւ որո՞նց կողմանէ գրուեցան: Եթէ Մովսէս է անոնց հեղինակը, որչա՞փ մասը գրեց. ապա ո՞վ կամ որո՞նք անոր վրայ յաւելուածներ ըրին: Այս շիտակ է նաեւ Յեսուայ, Դատաւորաց, Հուսթի, Թափաւորաց եւ Մնացորդաց գիրքերուն համար: Կատարելապէս

յայտնի եղած չէ եւ թերեւ ալ երբեք պիտի չըլլայ թէ Յորի գիրքը ո՞վ, ե՞րբ, ո՞ր լեզուով եւ ո՞ւր գրած է: Եսթերի գրքին համար ալ վիճակը ճիշդ նոյնն է: Սաղմոսաց, Առակաց, Ժողովոցի, մարգարէական գրութեանց ոմանց հեղինակներուն եւ գրութեան ժամանակներուն մասին հազար ու մէկ հարցեր ծագած են, որոնցմէ չատերը տակաւին մինչեւ այսօր անպատասխանի մնացած են: Նոր Կտակարանի գաղով՝ հոս ալ վիճակը սուկէ քիչ տարբեր երևոյթ մը կը պարզէ: Բացառութիւն կազմելով Պողոսի չորս թուղթերը—Հռովմ., Կալ., Ա. եւ Բ. Կորնթ.—որոնք առանց վէճի իբր անոր իսկատիպ գրութիւնները ընդունուած են, Նոր Կտակարանի մնացեալ բոլոր գրութիւններուն հեղինակներուն, անոնց խմբագրութեան ժամանակներուն եւ տեղերուն եւ ուրիշ կարեւոր հարցերուն մասին շատ վէճեր յարուցուած եւ տարբեր կարծիքներ յայտնուած են:

Աւետարաններու մէջ յիշատակութիւն մը չկայ թէ անոնք իրենց ներկայ կազմովը Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի կողմանէ գրուած են: Թերեւս երբեք կարելի պիտի չըլլայ որոշել թէ եբրայեցոց թուղթը գրողը ո՞վ է: Ս. Գրքի մասին այս է իրողութիւնը:

Արդեօք ինչո՞ւ այս այսպէս է: Սըրբազան հեղինակները արդեօք ինչո՞ւ իրենց գիրքերը գրելէ վերջ անոնց տակ իրենց ստորագրութիւնը չեն դրած, ժամանակն ու տեղը չեն նշանակած, եւ այս կերպով իրենցմէ ետքը եկողները այսքան դժուարութիւններու մասնաւոր են: Այլ եւ այլ պատճառներէն մի քանին յիշել կը բաւէ:

Ձանոնք խմբագրողները, Ս. Հոգիին առաջնորդութեան համեմատ, նախ ուրիշներու կողմանէ գրուած կտորները հաւաքեցին, որքան որ անոնցմէ կրցան գտնել, եւ ապա անոնց վրայ աւելցուցին

ինչ որ իրենք լսած կամ տեսած էին եւ իրենց քրիստոնէական փարձաւութեան յարմար գտած էին: Այնպէս որ Ս. Հոգին իբր անոնց բուն հեղինակը ընդունեցին: Դարձեալ՝ Նախախնամութեան և Ս. Հոգիին այնպէս յարմար թուեցաւ, որ Ս. Գրքի վերաբերեալ հարցերը մէկ սերունդի, մէկ կամ մի քանի զարերու միջոցին չլուծուին և չլման, այլ ամէն ցեղ և ազգ, ամէն սերունդ մինչեւ աշխարհին վերջը զանոնք քննէ, ճշդ է եւ հաստատէ իրեն համար, այս կերպով մարդկային միտքն ու հոգին այս գրքին հարցերովը գրադին. սկիզբէն մինչեւ հիմա այսպէս ալ եղած է: Հրեայ բարբիներն ու քրիստոնեայ հայրապետները մտաւորական մեծ ջանքեր կատարած են Հին եւ Նոր Կտակարաններու կանոնը որոշելու համար: Քրիստոնեայ գիտունները ամէն դարու մէջ, կրկին ու կրկին անգամներ օգտուելու ջանացել են Եզրպտոսի արձանագրութիւններէն, Բաբելոնի աղիւսներէն, հին աշխարհի պատմութեան յատուկ սեպագրութիւններէն, վանքերու մութ անկիւնները վառելու համար գիլուած թուղթերէն և ստորերկեայ դամբաններու արձանագրութիւններէն՝ իբր կանոնական ընդունուած գիրքերու վաւերականութիւնը, ամբողջութիւնը և իսկութիւնը որոշելու համար: Եւ այս կերպով մանրագնին խուզարկութեան ենթարկած են Նեղոսի եւ Յորդանանի և Եփրատի հովիտները եւ Սինայի լեռներսւն վանքերը:

Ներկայիս գիտուններու մեծագոյններէն շատերը Ս. Գրքի շուրջ յառաջ եկած և անոր կողմէ գրգռուած հարցերով կ'գրադին, մինչդեռ քիմիական, ճարտարագիտական և բնագիտական գիտութեանց տարբեր մարգերուն մէջ հետաքրքրաշարժ անհամար հարցեր կան: Գիտունները անկասկածելիօրէն Պօղոսի կողմէ գրուած չորս թուղթերը կը քննեն, հասկնալու համար թէ ոչ ոք կա-

րելի է անոնցմէ Աւետարաններու պատմութիւնները չինել: Կարծես թէ մարդկային միտքը զբաղեցնելու համար հարցերը անլուծելի թողուլ կարեւոր մէկ տարր կը կազմէ Քրիստոնէութեան ծրարագրին կէջ: Անոր մէջ միշտ քննելի և խուզարկելի հարցեր կան, որոնց մասին դրուած գիրքերը մեծ գրադարաններ կազմած են:

Ս. Գիրքը մտաւորական զարգացումին սատարած է նաեւ սա տեսակէտով՝ թէ ան կը յարմարի կեանքի ամէն մէկ շրջանին և աստիճանին և կրնայ ամէն լեզուի թարգմանուիլ: Հոմերոսի, Շէքսպիրի, Տանդէի, ուրիշ բանաստեղծներու, իմաստասէրներու և ուրիշ կրօններու գիրքերը այսպէս չեն: Անոնք իրենց անուշութիւնը կը կորսնցնեն ուրիշ լեզուներու թարգմանուելով: Իսկ Ս. Գիրքը մարդկային մտքին ամէն աստիճանին մատչելի է, և մեծ թիւ կազմող միջակ կարողութեամբ մտքերուն զարգացման կը նպաստէ: Ս. Գրքի սիրողներն ու ընթերցողները ամէն աստիճանէ դպրոցներ հաստատած, տպարաններ պահած և մարդկային մտքին թաքուն ոյժերը գրգռած են:

Ոչ-քրիստոնեայ աշխարհին մէջ, քրիստոնէութեան մէջ եղածին պէս, յառաճուն, յառաջագէտ և ազդեցիկ միջին դասակարգ մը զոյութիւն չունի: Հոն մարդիկ գիտուն կամ չատ տղէտ, իշխան կամ գերի են: Ս. Գիրքն է որ հասարակ ժողովուրդը կը թած է և բարձրացուցած: Քրիստոնէութիւնը և անոր դասադիրքը եղող Ս. Գիրքն է, որ ազատ, համարձակ, խորհող և աշխարհին պատիւ բերող ժողովուրդ հասցուցեր են:

Նոտ յարմար է յիշել ուրիշ կարգ մը կէտեր ալ մտաւորական զարգացման մէջ Ս. Գրքին ծառայութեանց մասին: Անիկա բարձր նիւթեր կը ներկայացնէ մտքին: Հին Կտակարանի մարդարէնե-

րը, Պօլոս, Յովհաննէս, Պետրոս և Նոր
Կառկարանի ուրիշ գրողները իրենց
պատգամները երկնքէն ստացան ու զա-
նոնք աշխարհի հաղորդեցին: Ամէն ու-
սումնասէր միտք անոր մէջ շատ բարձր
և միեւնոյն տաէն շատ պարզ ճշմար-
տութիւններ կը գտնէ զբաղելու եւ վա-
յելելու համար, որոնք չեն հիննար
ժամանակի հոլովոյթով և չեն ազդուիր
կլիմայի եւ միջավայրի ազդեցութիւն-
ներէն: Անոնց տեսլիքները միշտ թարմ
են, համոզումները՝ զօրաւոր եւ որոշ, ո-
րոնք շարժումի կը մղեն մարդկային
սիրտը: Երբ անոնց գրութիւնները
կարգաս կը կարծես թէ տակաւին այ-
սօր քեզի հետ կը խօսակցին: Ս. Գիր-
քը մեծապէս ծառայած է ամէնէն ճոխ և
ամէնէն մեծ լեզուներու հարստանալուն:
Ս. Գիրքն է՝ եբրայերէնի, յունարէնի,
գերմաներէնի, անգլերէնի, ֆրանսե-
րէնի, լատիներէնի եւ հայերէնի նման
մեծ լեզուներու մէջ գրուած ամէնէն
պերճախօս գիրքը: Գրեթէ առանց բա-
ցառութեան այս և նման լեզուները խօ-
սող մեծագոյն միտքերը, ուսուցիչնե-
րը, բարեկարգիչներն ու փիլիսոփաները
իրենց լեզուները բարեփոխելու հա-
մար մեծ ջանքեր թափած են, որպէս զի
այս գրքին պատգամները, բարոյական
և հոգեւոր ճշմարտութիւնները հաղոր-
դեն իրենց եւ ուրիշ ազգերուն: Ս. Գիր-
քը նաեւ ոչնչացումէ փրկած է շատ մը
լեզուներ, որոնք տգիտութեան փոշիին
մէջ յաւիտեանապէս թաղուած պիտի մը-
նային: (Շարունակելի)

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՐՀԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Այս վերջին օրերս Գերմանիոյ մէջ
յառաջ եկաւ Այնշթայն անուն Հրեայ
մեծ փիլիսոփայ մը, որուն յայտնած
շատ արտասովոր, դժուարահասկնալի և

մեծ գաղափարները բոլոր աշխարհին
հիացման պատճառ կ'ըլլան. կ'ըսուի
թէ բոլոր աշխարհի մէջ հազիւ հինգ
կամ վեց անհատներ կան որոնք զանոնք
կրնան հասկնալ: Այնշթայնի յայտնու-
թիւնները երբեմն այնքա՛ն տարօրինակ
բաներ կը պարունակեն որ մարդ կը մըղ-
ուի զինքը խենդ կոչել: Այս մարդը
կը պնդէ որ աշխարհիս մէջ նիւթ ըսուած
առարկան գոյութիւն չունի ինչպէս որ
ամէն ոք կը կարծէ, թէ մեր միշտ տե-
սած քարերն ու փայտերը, մեր գրպան-
ներուն մէջ գտնուող ժամացոյցները գո-
յութիւն չունին. մէկ խօսքով գուն և
ես ալ գոյութիւն չունինք հոս, եւ թէ
վերջապէս նիւթն ալ լոյսի կամ տաքու-
թեան նման ոյժ մըն է: Մինք վերը
հասկնալու ջանացինք թէ նիւթը չէ էն
թանկագին բանը, այլ այն՝ որ անտեսա-
նելի է: Եթէ՝ Այնշթայնի տեսութեան
համեմատ նիւթը, որուն ամէնէն աւելի
իրական ըլլալուն համոզուած ենք, մեր
հասկցած կերպով գոյութիւն չունի, ա-
սիկա յայտնի կերպով չ'իլլոցներ թէ
անտեսանելի բաներն են արժէքաւոր և
տեւական իրերը աշխարհի մէջ:

Մինչ այս նիւթը կ'ուսումնասիրէի
խորհեցայ որ երանի թէ Արարիչը վեցե-
րորդ զգայարանքով մեզ օժտած ըլլար,
անոր միջոցաւ անտեսանելի աշխարհը
զգալու և հասկնալու համար: Բիշ մը
խորհելէ վերջ տեսայ որ մարդը այսպիսի
զգայարանք մը ունի արդէն:

Մարդկային հնագոյն յիշատակարան-
ներէն կը հասկնանք որ մարդը սկիզբէն
իվեր մշտնջենապէս ապրելու սաստիկ
փափաքը ունեցեր է իր սրտին մէջ: Այս
միշտափոփոխ և կորնչելի նիւթական
աշխարհէն անդին անփոփոխ և հոգեւոր
աշխարհի մը գոյութիւնը իրական են-
թադրած է ան, և այս անարդար,
զաւն և չար աշխարհէս անդին արդար
և անվիշտ աշխարհի մը համար անշէջ
յոյս մը տածած է:

Ուրեմն ի՞նչ ըսենք, անարդար եւ սխալ է, յիմարութիւն է ըսել թէ բոլոր մարդկային ցեղը անձանթ դարերէ ի վեր զուր տեղ այս տենջով, ենթադրութեամբ եւ յոյսերով ապրած ու անցած են: Քըրիստոսէ շատ առաջ մարդիկ իրենց այս վեցերորդ զգայարանքով կրցած են շօշափել հոգեւոր ճշմարտութիւնները, որոնց գիւտը ոյժ եւ սփոփանքի մեծ աղբիւր մը եղած է իրենց համար: Սովորաւոր երբ հասկցաւ թէ գաւաթի մէջ իրեն թոյն կը մատուցանեն, զայն խմեց ու մեռաւ ի սէր անտեսանելի աշխարհին եւ անոր ճշմարտութիւններուն, որոնց ինք հաստատ կերպով հաւատացած եւ զանոնք քարոզած էր: Հին Յոյները անտեսանելի մէկ աստուծոյն գոյութիւնը կը հուշակէին, իրենց տաճարներուն մէջ «անձանթ աստուծոյ» անուան արձաններ կանգնելով, որոնք կը վկայէ Պօղոս Առաքեալ:

Մարգը՝ Քրիստոսէ առաջ այս անտեսանելի աշխարհին գոյութիւնը հազիւ կրցած է զգալ եւ վարդապետի մը հետեւէն զայն դիտել: Մեր Տիրոջ գալուստովը եւ Անոր ականատեսի վկայութեամբ այս թերի գաղափարները լրացած են եւ անտեսանելի աշխարհը իրականութեան ձեւով մարդոց ներկայացուած է: Ոչ մէկ մարդ Յիսուսի չափ կրցած է տեղեկութիւն տալ անտեսանելի աշխարհի մասին:

Անտեսանելի աշխարհի տեսիլքը մարդուն համար անհաւատալի քաջութեան եւ ոյժի աղբիւր մը եղած է կեանքի ամէնէն տաժանելի պարագաներուն տակ: Սափոնարուա Գլօրէնսի մէջ մահուան դատապարտուեցաւ իր քարոզած ճշմարտութեանց համար. երբ վճիռին դորձադրաւայրը հասաւ՝ ան յայտնեց թէ ինք անտեսանելի աշխարհին ճշմարտութեանց համար մեռնելու պատրաստ է, եւ ապա ինքզինքը քաջարար րոցերուն մէջ նկատեց: Տակաւին մեր

ականջներուն չե՞ն հնչեր ձայները մեր սիրելի ազգակիցներուն, որոնք այս յուսով տոգորուած թուրքին սուրն ու կրակը արհամարհեցին եւ մահը երկելով գիմաւորեցին. անոնք այս կերպով կենդանի վկաները եղան անտեսանելի աշխարհին, որուն բնակիչներուն վրայ աւելնալու գացին անոնց անտեսանելի հոգիները:

Մարգը սկիզբէն ի վեր ճշմարտ երջանկութեան հետամուտ եղած է, մղուելով իր մէջ դաժնուող յաւիտենական երջանկութեան զգացումէն. շատ յոգնած է յաճախ զայն փնտռելու աշխատելով սխալ տեղերու մէջ, նիւթական աշխարհի նիւթական իրերուն մէջ: Դառն փորձառութեամբ վերջապէս հասկցուած է որ ճշմարտ երջանկութիւնը կարելի չէ միայն նիւթով ձեռք ձգել, որուն վրայ պէտք է աւելցնել արժէքաւոր անտեսանելի իրերը: Ծեղքուած ջրամբարի կը նմանի հոգեւոր արժէքէ գուրկ նիւթը որ հետեւեալ չի կրնար գահայնել մարգը: Պատերազմներու, կռիւներու, գանգոտներու, տաժանալուծումներու եւ ոճիրներու բուն պատճառը պէտք է փնտռել նիւթի, մարմնի եւ ֆիզիքական յարաբերութիւններու վրայ պէտք եղած անտեսանելի տարրերուն չ'աւելնալուն մէջ:

Մեծ պիտութիւններու մեծ միտքերը տասը տարիէ ի վեր գլշեր ցերեկ թէպէտ կ'աշխատին որ պատերազմը աշխարհէս վերնայ, բայց անկարող կը գտնուին ստոր կերպը գտնելու համար. եւ զուր տեղ կը վատնուին անոնց բոլոր ջանքերը քանի մարդկային բնոյթը անփոփոխ կը մնայ: Թերեւս ժամանակի մը համար պիտի կրնան պատերազմը յիսաձգել, բայց այս յետաձգումը պիտի նմանի ճնշումի տակ գտնուող վատթի, որուն պայթումը այնքան սուտիկ պիտի ըլլայ որքան յետաձգումը երկարի: Պատերազմը արգիլելու մի-

այն մէկ միջոց կայ. այն է աշխարհիս
և մարդոց սրտին մէջ գնել անտեսանե-
լի աշխարհին անտեսանելի տարրերը,
ահա այն առան հարցը ինքնիրմէն պիտի
լուծուի:

Ո՛վ բարեկամ, կ'ուզե՞ս բարձրանալ
և կեանքի բարձր ոլորտները ելլել. սոր-
վէ՛ ձգտիլ զէպի անտեսանելի իրերը.
վատա՛հ եղիր որ այս մարդանքը քեզ պի-
տի վսեմացնէ և պիտի բարձրացնէ. կ'ու-
զես երջանիկ ըլլալ. այո՛, կ'ուզե՞ս ու-
րախ ըլլալ նոյնիսկ վշտի և տառապան-
քի մէջ՝ կեանքիդ հորիզոնը ամպերով
ծածկուած ատեն, զլուխդ վերցո՛ւր և
ջանա՛ անտեսանելի աշխարհը տեսնե-
լու:

Տարիներ առաջ, Ապրիլի մը առաջին
շաբաթը, Զուլիգերիոյ Աշպիան լիռնե-
րուն և անոնց սառնարաններուն վրայ
պտոյտի դացինք: Շոգեկառքով մինչեւ
4000 մէդր բարձրերը ելանք, և սառի
զանգուածի մը մէջէն անցնող փապու-
զիէն սկսանք գիտել վեհատեսիլ լեռնե-
րը, սառնարանները, և անտառները.
Անմասնալի և վսեմափառ տեսարան
մ'էր ան, զոր անկարող են նկարագրել լե-
զուն և գրիչս: Մեր յոյսն ու փափաքը
այն է որ այս Նոր Տարին ալ, Աշպիան
սարի մը նման, հանգրուան մ'ըլլար
անտեսանելի աշխարհը տեսնելու, ու առ-
կէ հոքը անահաւանելի իրերու կարօտը
ոչնենայինք մեր սրտերուն և մեր տու-
ներուն մէջ, մեր արհեստին և վաճա-
ռականութեան մէջ և մեր խօսակցու-
թեանց մէջ:

(ՏՈՒԹ.) Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐԲԻ ՀԵՂԻՆԱԿԸ

(Շարունակութիւն և վերջ)

Արդ Աստուածն ու մարդը իբր հեղի-
նակ դաժժ եղանք Ս. Գրքի մէջ:

Մեր այս գիւտը կը համաձայնի,

1. Յս. Քրիստոսի մեծ յայտնումը ընդհանրապէս:

Անիկա իբր որդին մարդոց յայտնուեցաւ:
Մարդիկ ալ զայն իբր մարդ տեսան. քան-
զի ան անօթեցաւ, ծարաւցաւ, յողնեցաւ,
քնացաւ և իբրեւ մարդ մեռաւ: Բայց ու-
նոնք՝ որ զայն շատ մօտէն ուսումնասի-
րեցին կրցան դտնել թէ անիկա Աստուած
է նաեւ, քանզի ան սաստեց հովը, խաղա-
ղեցուց ծովը, վտարեց ակտերը և դատա-
պարտեց մահը: Արդ, եթէ «Բանն» որ
Աստուած էր, մարմին առաւ» (Յովհ. 1.
1, 14), եւ երկու բնութիւնը անոր մէջ
միացան, ինչո՞ւ պէտք է տարօրինակ նը-
կատել Աստուածային պատգամի մարմնա-
ռումը մարդկային բացատրութեան մէջ:

2. Ան կը հաւանային Յս. Քրիստոսի
ծառայելու կերպին: Այն անձը, որ ջուրը
գինիի փոխեց (Յովհ. 2. 2-12), միայն իր
հրամայելովը կրնար կարասները լեցնել,
կրնար գինին առանց ուրիշներու միջնոր-
դութեան սեղանապետին զրկել: Նմա-
նապէս, այն անձը որ կրցաւ մեռելը կեն-
դանացնել (Յովհ. 1-44) միայն հրամայե-
լով կրնար քարը զլտորել, և վերակենդա-
նացող Ղազարին կապերը ինքը քակել:
Ո՛հ, Ան չ'ուզեր ընել ինչ որ մարդիկ կըր-
նան, Ան կը փափաքի մարդերը գործել
տալ, անոնց չկրցածները ինք կատարել,
և արդիւնքի մէջ իբր գործակից զանոնք
ուրախացնել: Ուրեմն ինչո՞ւ անընդունե-
լի պէտք է նկատել թէ այն աշակերտնե-
րը, որոնք ժամանակաւոր հրաշքներու
մէջ գործակցութեան վարժեցուած են,
Ս. Գրքի խմբագրութեան մէջ ալ գործա-
կից եղած ըլլան, այն Ս. Գրքին՝ որ մըշ-
տընջենական հրաշքն ու հրաշագործն է:

3. Ան կը հաւանային առաջագործու-
թեան նսրասակին: Ս. Գրքը կը յայտնէ
թէ Աստուած կը զիջանի նոյնիսկ գործա-
ծելու հովը (Յովիւան 4), անձրեւն ու ձիւ-
նը (Ես. 55. 10). օդի շարժումը (ձայնը)
(Դ. Թադ. 7. 6), մութը (Սաղ. 105. 20),
էշը (Թուց 22. 25), աքաղաղը (Մթ. 14.
22), հասարակ որդը (Յովիւան 4. 7), և լին:
Արդ՝ ինչպէ՞ս կարելի է որ Աստուած չը-

դործածէ մարդուն, արարածներու բարձրագոյնին, մէջ տեսնուող երեւեակայելու, եղբակացեալու, արտայայտելու և ուրիշ նման կարողութիւնները, որոնց՝ մանաւանդ, աղբիւրը ինքն է:

4. Ան կը հասնւոյնի մարդը նոր ընկշու եւ սրբագործելու մասին Աստուծոյ նպատակին: Մարդ նոր բնութեան կը տիրանայ, որդեգրութեան կ'արժանանայ (Հռոմ. 8. 15, 17), թողութիւն ստանալով իր մեղաց համար: Քանզի ան՝ իբր կանչուած, թողութիւն առած, սրբագործուած մէկը (Հռոմ. 8. 29. 30), որ Յիսուս Քրիստոսի պատկերին կերպարանակից ըլլալու սահմանուած է (Հռոմ. 8. 17), Անոր չարչարանքին կըցորդ և վերջապէս անոր փառքին հաղորդ (Հռոմ. 8. 17) ըլլալու արտօնութիւնը կ'ստանայ: «Չէ՞ք գիտեր որ սուրբերը պիտի դատեն աշխարհը» (Ա. Կորն. 6. 2): Ուստի՝ շատ բնական չէ՞ որ այն որ Աստուծոյ ծնած է [Ա. Յովհ. 4. 7.] և անոր միտքն ունի (Ա. Կորն. 2. 16), Անոր կողմանէ գործածուի և գործակից ըլլալու աստիճանին բաժրացուի: Պողոս որ իր անձնական փորձառութեամբ ճանչցած է այս՝ սապէս կը կանչէ. «Մենք Աստուծոյ գործակից ենք» (Ա. Կորն. 3. 9) «Ուստի մենք ալ գործակից ենք» (Բ. Կորն. 6. 1):

5. Այս գիւտը մեզի յարմարութիւն կ'ընծայի Սուրբ Գրքի մեջ ուշադրութիւն գրառող դժուարութիւնները լուծելու համար: Ճշմարիտ կրօնքը և ճշմարիտ գիտութիւնը միշտ իրարու հետ ներդաշնակ են, որոնք իբր իրարու լրացուցիչ ոյժեր, թրուչունի երկու թիւերուն նման, մարդկութիւնը միշտ գէպի յառաջ և գէպի վեր կը մղեն, բայց մէկուն կամ միւսին կողմանէ յայտնուած թերի բացատրութիւնները միշտ դժուարութիւն կը յարուցանեն: Անհաւատ գիտունը այնչա՛փ տըկար է կրօնական հարցերը լուծելու մէջ, որչափ որ խեղճ է տգէտ հաւատացեալը գիտական հարցերը լուծելու մէջ: Ա-

նոնք պէտք է զիրար յարգեն, և պէտք է իրարու առիթ տան անկաշկանդ գործելու համար: «Տառական ներշնչումի» վարդապետութիւնը մինչ կը բռնագրաւէ բոլոր ասպարէզը, «գործակցութեան» գաղափարը Աստուծոյ պատկանողը Աստուծոյ և մարդուն պատկանողը մարդուն կը վերադարձնէ: Եւ եթէ մէկը կը հաստատէ թէ պատմական կամ գիտական հարցի մը մասին թերի բացատրութիւն կայ Ս. Գրքի մէջ, վստուած ասկէ զերծ կը հուշակենք քսելով թէ «անիկա մարդուն թերութիւնն է», քանզի գիտենք թէ Աստուծոյ չի կրնար կրօնքի մէջ տեսակ մը եւ գիտութեան մէջ անոր հակառակ խօսիլ: Երբ կը գիտենք գիշերուան մէջ փաշիւղոջ Լուսինը, մենք կը տեսնենք՝ թէ՛ լոյս արձակող բայց չտեսնուող Արեւը, թէ՛ այդ լոյսը ցոլացնող Լուսինը: Մինչ մենք գեղեցկութիւնը Արեւի կը վերադրենք, տեսնուող թերութիւնը, լուսնին ու ձորերը, Լուսնի կը վերագրենք: Նմանապէս մենք կը հիւսնանք Ս. Գրքի մէջ՝ Աստուծոյ, մարդու, մեղքի, փրկութեան և յաւիտենականութեան նման նիւթերու մասին եղած գաղափարներու կատարելութեան և անոնց փառքը կուտանք Աստուծոյ, բայց անոր ոճին, առակներուն եւ մեկնութեանց մէջ, անոր պատմական եւ գիտական բացատրութեանց մէջ եթէ մեզի համար անլուծելի դժուարութեան մը կը հանդիպինք, զայն ալ մարդուն կը վերադարձնենք:

Կրնայ հասկցուիլ թէ արդեօք վտանգ մը չկա՞յ այսպէս դաւանելու մէջ: Միւր կարծիքին համեմատ երկու մեծ վտանգներէն ազատ կը մնանք. — Անոնք՝ որ մարդկային տարրը չափազանցութեան կը տանին գէպի անհաւատութիւն կ'ուղղուին իսկ անոնք որ կ'ըսեն թէ ան բառ առ բառ գրուած է գէպի կուտալարութիւն կը միտին: Առաջինին փաստերը ծանօթ են. երկրորդին համար կրնանք յիշել հրեաները: Գրողը՝ օրէնքի հեղինակութիւնը ա-

ւելի հաստատ ընելու համար բանաստեղծական ոճով «Աստուծոյ մատովը գրուած» բացատրութիւնը կը գործածէ [Ելք . 31 . 18]: Այն հրեան , որ այս խօսքը տառական կերպով ընդունեց , չխորհեցաւ թէ «Աստուած հոգի է» (Յովհ . 4 . 24) , թէ «Ոգին մարմին և ոսկորներ չունենար» [Ղուկ . 24 . 39]: Հետեւեալ , անոր վրայ աւելցուց նաև իր աւանդութիւնները , իբր թէ ամէն մէկ բառը անթիւ իմաստներ ունի և Աստուած ալ գիշեր ցերեկ զայն կը ուսումնասիրէ: Ասոր արդիւնքը ըլլալով ամէն մէկ գիր , ամէն մէկ բառ , նոյնիսկ գրութեան մագաղաթները սուրբ նկատուեցան , և սկսան հինցած մագաղաթները ամենայն յարգանքով գերեզմանի մէջ թաղել: Նոյնիսկ , անծանօթ մնացած է թէ Հրեայ մը ի՛նչպէս կ'արտասանէր Աստուծոյ անունը , զայն արտասանելու չհամարձակելուն համար: Մեր Տէրը յանդիմանեց զանոնք այս տառապաշտութեան համար (Մթ . 15 . 1-9 , 23 . 1-39) , և աւելի ըլլալով Ան սրբագրեց , բարեփոխեց և լրացուց կտակարանը շատ մը կէտերու մէջ , որոնք անոնց համար վերջնականօրէն հաստատ կը նկատուէին (Մթ . 5 . 32-38): Կառավարութիւնն ալ ձանձրացիր էր անոնց այս տառապաշտութեան (Գործ . 18 . 15): Իսկ Պօղոս զգուշանալ կը պատուիրէ երկտառար քարովիչին եւ անոր ժողովուրդին , որոնք տառապաշտ Հրեաներու հետ սին վիճաբանութեան մէջ իյնալու վտանգին մէջ կը գտնուէին (Ա . Տիմ . 6 . 4 , Բ . Տիմ . 2 . 14) . քանզի անոր սրտին բաղձանքն էր ծառայել «հոգիին նորոգութեամբը , եւ չէ թէ զրին հնութեամբը» (Հռովմ . 7 . 6):

Հրեաներու մէջ երևան եկող այս տառապաշտութեան տխուր փոխանցուեցաւ նաև Քրիստոնեայ Եկեղեցիին եւ իր կառավարութեան հասաւ Կաթողիկոսութեան մէջ , որ ըսելով թէ հասարակ ժողովուրդը արժանիք չունի Ս . Գիրքը կարդալու եւ զայն հասկնալու անոր ձեռքէն տուաւ զայն

եւ միայն արտօնեց Ս . Գիրքի կափարիչին վրայի պատկերը համբուրել: Ս . Գիրքը ժողովուրդին անծանօթ , եւ օտար լեզուի մէջ բանտուած գիրք մըն էր Լուտերիատեանը , որ զայն ժողովուրդին լեզուին թարգմանելով յայտարարեց թէ ան ընդհանուրին պատկանող գիրք մըն է , քիչ մ'ալ յառաջ երթալով քննադատեց զայն և Յուդայի թուղթը մերժեց , իսկ Յակոբոսինը յարդնկատեց և Յայնութեան գիրքը բոլորովին աննկատ թողուց . այնպէս որ «տառական ներշնչում» ի վարդապետութիւնը բոլորովին մերժուեցաւ Բարեկարգութեան շրջանին:

ԺԷ . զարուն մէջ Բողոքական Եկեղեցին դժուար հարցի մը առջև գտաւ ինքզինքը . Կաթողիկոսութեան մէջ Եկեղեցիին էր կրօնական հեղինակութիւնը , բայց ո՞րը պիտի ըլլար այն՝ Բողոքականութեան մէջ: Զիշդ այս պահուն «տառական ներշնչում» ի խնդիրը վերստին արծարծուեցաւ , եւ իբր բացարձակ հեղինակութիւն Ս . Գիրքը ցուցուցին , եւ նոյնիսկ պնդեցին թէ «անոր ամէն մէկ բառը և շեշտն անգամ սուրբ են» . և այս կերպով իբր թէ դատը չահեցան:

ԺԸ . զարուն կէսէն սկսեալ գլոտունները սկսան գործածել ուսումնասիրելու կերպ մը , որ «բարձրագոյն քննադատութիւն» կոչուեցաւ: Թէպէտ չկրցան վերջնական եզրակացութեան մը յանգիլ , բայց բոլոր հոգեւոր մարդիկ որ ուսումնասիրեցին գիրքը , առանց առարկութեան ընդունեցին թէ «տառական ներշնչում» ի վարդապետութիւնը չի կրնար ճիշդ ըլլալ ներկայիս մեր ձեռքը գտնուող Ս . Գիրքին համար: «Ուստի հիմա ինչո՞ւ զԱստուած կը փորձէք , աշակերտներուն պարանոցին վրայ այնպիսի լուծ մը գնելով , զոր ոչ մեր հայրերը և ոչ ալ մենք կրցանք վերցնել»: Գործք . 15 . 10: «Վասնզի գիրը կ'սպաննէ , բայց հոգին կ'ապրեցնէ»: Բ . Կորն . 3 . 6:

Եթէ պարզուած կէտերուն այս կամայն մասին առարկութիւն , կասկածելի կը տես-

նենք թէ անոնց ընդհանուր խմատը չհաս-
կցող և իր մտքին մէջ զանոնք իրաւացի չը-
նկատող անձ մը գտնուի: Եւ եթէ հարցուի
որ ինչո՞ւ ուրեմն ամէն ոք այս խոստովա-
նելու չափ քաջութիւն չի ցուցներ, կը պա-
տասխանենք թէ անոնք մարդկային եւ
Աստուածային տարրերը իրարմէ զանազա-
նելու մէջ զժողարութեան կը հանդիպին,
և հետեւաբար կը վախճան որ այս զանա-
զանելու գործին մէջ Աստուածային տար-
րը իր արժանի եղած յարգանքէն զրկած
կ'ըլլան: Այս վախը մասամբ իրաւացի է:
Թէպէտ ձուկ ուտելը շատ հաճելի է, բայց
միտը ոտկորով միասին գատելու կամ սակո-
րը միտով միասին ուտելու վտանգը կայ-
այսու հանգերձ ուշադրութեամբ կ'ուսենք
ձուկի միտը: Ասկէ շատ աւելի ուշադրու-
թիւն կը պահանջէ Ս. Գրքի ուսումնասի-
րութիւնը, որ սակայն մեծապէս կը վար-
ձատրէ: Բնական մարդուն համար զըժ-
ուարութիւն չէ, այլ անկարելիութիւն կայ:
«Ենչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բա-
ները... չկրնար ալ գիտնալ» (Ա. Կորն. 2.
14): Իսկ ծոյլ հաւատացեալները, որոնք
տակաւին կաթի կարօտ մանուկներ են,
չեն ուզեր կրթուիլ չափահասներու նման
զանազանիլ գիտնալու համար: Եբր. 5.
12-14:

Բայց վախ չկայ հոգեւոր մարդու հա-
մար, քանզի ան հոգեւոր կաթի փափաքը
ունի (Ա. Պետ. 2. 2), զոր գոհացնելու հա-
մար «Ս. Հոգին բոլորը պիտի սորվեցնէ»
(Յովհ. 14. 26), ու «ամէն ճշմարտութեան
պիտի առաջնորդէ» (Յովհ. 16. 13), ինչ-
պէս որ խոստացուած է Ս. Գրքին մէջ:
Պօղոս կ'ըսէ. «Ան որ հոգեւոր է՝ ամէն բան
կը քննէ», (Ա. Կորն. 2. 15): Իսկ Յով-
հաննէս կ'ըսէ. «Բայց զուք օժութիւն ու-
նիք Սուրբէն, ու ամէն բան գիտէք...
ու պէտք չէ որ մէկը ձեզի սորվեցնէ» (Ա.
Յովհ. 2. 20, 27):

Վերջացնելէ առաջ կ'ուզենք ընթեր-
ցողներուն ուշադրութիւնը հրաւիրել մաս-
նաւորապէս հետեւեալ երկու կէտերուն վրայ:

1. Եկեղեցին՝ Յիսուս Քրիստոսի աստ-
ուածութիւնն ու մարդկութիւնը թէպէտ
միշտ ընդունած է պատմութեան մէջ, ուս-
կայն՝ հոգեւոր կեանքը ամէն տեղ և միշտ
փայլած է երբ Անոր աստուածութիւնը
չեղաւած է, իսկ հոգեւոր կեանքը ետ մնա-
ցած է երբ Անոր աստուածութիւնը զանց
առնուելով մարդկութիւնը չեղաւած է:
Սուրբ Գրքի համար ալ կանոնը ճիշդ նոյնն
է: Անոր մէջ մարդկային եւ Աստուա-
ծային տարրեր կան, բայց անոնք՝ որ
աստուածայինը անտեսելով մարդկայինը
չեղած են հոգեւոր կեանքի մէջ միշտ ետ
մնացած են ու պիտի մնան: Իսկ անոնք՝
որ մարդկայինը ընդունելով հանգերձ աստ-
ուածայինը տեսած եւ վայելած են միշտ
«Երկնքի լոյսին պէս, և անոնք որ շատերը
արդարութեան կ'առաջնորդեն» աստղերուն
պէս պիտի փայլին յաւիտեանս յաւիտե-
անից:» Դան. 12. 3:

2. Զխաբուինք, ներկայիս տեսնուող
հոգեւորութեան պատճառը Ս. Գրքի իբր
հեղինակ միայն զԱստուած ընդունելը չէ
և կամ աշխարհիկ կեանքին պատճառը ա-
նոր մէջ մարդկային տարրին գոյութեան
մասին եղած համոզումը չէ: Ինչու հարցը
հնազանդութեան շուրջ կը դառնայ: Այն ա-
մէն անհատ որ յօժար է իր գիտցած չա-
փով ճշմարտութեան համեմատ ապրելու՝
Աստուծոյ հաճելի է, եւ իր հնազանդու-
թեան համեմատական չափով աւելի լոյս
պիտի ստանայ: Մեր Տէրը կ'ըսէ. «Եթէ
մէկը կ'ուզէ Անոր կամքը ընել պիտի գիտ-
նայ...» Յովհ. 7. 17: Լոյսը՝ հնազան-
դութեան միակ վարձատրութիւնն է:

Եւ մենք կոչուած ենք Ս. Գրքի մեջ զԱս-
տուած տեսնելու չափ արճով մտաւոր, մարդը
տեսնելու չափ ուշիւ. խոստովանելու չափ ազ-
նիւ եւ սպրեշու չափ հոգեւոր ըլլալու: «Ա-
սոր համար աւելի ջանք ըրէք որ ձեր կո-
չումն ու ընտրութիւնը հաստատէք» . Բ.
Պետ. 1. 10:

Հաղպ,

Ս. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԴԵՊ Ի ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

«Սիրոն»-ի մէջ Տ. Բ. ԵՊՍ. Կիւլէսէր-
եան Հայ Առաք. Եկեղեցւոյ բարեկար-
գութեան շուրջ գրած իր յօդուածաշար-
քը կը փակէ երեք եղբակացութիւննե-
րով, «Սիրոն»-ի 1930, Յունվարի թիւին
խմբագրականին մէջ:

ա) Ամէնէն առաջ պատրաստութիւնը
շնորհքով եկեղեցականութեան:

բ) Ժողովուրդին կրօնական դաստիա-
րակութիւնը:

գ) Սուրբ Գրքին աշխարհաբար նոր
թարգմանութիւնը:

Ահաւասիկ ասոնք են «ուսումնասի-
րած խնդիրներէն» երեքը զորոնք «կա-
րելի է գործադրել առանց հակաճառու-
թիւններու, առանց ժողովներու, առանց
պաշտօնական դործողութիւններու, եւ
մանաւանդ առանց ժամանակ կորսնցնե-
լու», կը գրէ որբազան խմբագրապետը:

Երուսաղէմ արգէն ձեռնարկած է
«շնորհքով եկեղեցականութեան» պատ-
րաստութեան և իր առաջին պտուղը ըս-
կըսած է տալ: «Բայց պէտքը» կը կար-
գանք «Սիրոն»-ի մէջ, «այնքան մեծ է որ
Երուսաղէմ պատրաստուած եկեղեցակա-
նութիւնը բաւական չէ... Պէտք է...
նաեւ միջոցներ ստեղծել Երուսաղէմէն
դուրս ալ պատրաստելու համար Հայ Ե-
կեղեցականութիւնը...»

Կրօնական դաստիարակութեան հա-
մար կը թելադրուի Կիրակնօրեայ կամ
Հոգեւոր Դպրոցներու կազմակերպու-
թիւնը, որ արդէն Հալէպի մէջ գոյու-
թիւն առած է Արտաւազդ Եպս. ի նախա-
գահութեան և Տիար Լ. Զէնեանի տնօ-
րէնութեան տակ: Եւ կը շեշտուի այս
ձեռնարկը ընդհանրացնել:

Շատ զօրաւոր կերպով կը շեշտուի
Սուրբ Գրքի աշխարհաբար նոր թարգ-
մանութեան պէտքը, որուն «յետաձգու-
մը իրական վտանգ մ'է այլեւ մեր եկե-

ղեցիին համար» կը շարունակէ Բարգէն
Եպս.:

Հայ Աւետ. Եկեղեցիին կողմանէ գոր-
ծածուող և Ամերիկեան և Անգլիկան Ս.
Գրքի Ընկերութեանց կողմանէ հրատա-
րակուող Ս. Գրքը «չի կրնար Հայց. Ե-
կեղեցւոյ կողմէն պաշտօնապէս ընդուն-
ուիլ», որուն համար երկու պատճառ-
ներ կը յիշուին:

Ա. Յիշեալ ընկերութիւններու կող-
մանէ հրատարակուող աշխարհաբար Ս.
Գրքը երբայական կանոնին համաձայն
է, իսկ Հայ Առաք. Եկեղեցւոյ ընդունած
Ս. Գրքը, Սահակ Մեսրոպի թարգմա-
նութիւնը, յունական «Եօթանասնից»
թարգմանութեան համաձայն է, որ Եր-
բայականէն աւելի զիրքեր կը պարու-
նակէ, հետեւաբար «Բողոքականներու»
Աստուածաշունչին մէջ պակաս զիրքեր
կան:

Բ. Հայ Աւետ. Եկեղեցիին գործածած
Ս. Գրքին լեզուն «ռամիկ է գրիթէ»:
Հետեւաբար «նոյնիսկ Աստուածաշունչի
Ամերիկեան Ընկերութիւնը, եթէ կուզէ
որ իր հրատարակութիւնը աւելի սիրուի
և աւելի տարածուի, պէ՛տք է որ վերաբնե-
ւոյն իրենց, անհրապոյ՜ աշխարհաբար»
(ընդգծումը մերն է):

Այս զիտողութիւններէն ետքը «Սի-
ռոն» սապէս կը շարունակէ. «Մեր կար-
ծիքով, մեր ազգային և եկեղեցական
կեանքին արդի պայմաններուն մէջ,
Երուսաղէմ է այն միակ կեդրոնը ուր
Աստուածաշունչին աշխարհաբար մէկ
թարգմանութիւնը կրնայ կատարուիլ
յաջողապէս Ամին. Եղիշէ Դուրեան Ս.
Պատրիարքի առաջնորդութեամբ եւ
հսկողութեամբ:»

Պէտք չէ մոռնալ որ Հայ Աւետ. Ե-
կեղեցիի կողմանէ գործածուած Ս. Գրք-
ը թարգմանուած է երբ աշխարհա-
բար լեզուն զրակուն ձեւ մը տակաւին
չէր առած: Եւ անոր թարգմանիչնե-
րուն և հրատարակիչներուն մտքին մէջ

մէջ զայն վերջնական սրբազրուեթեան մը ենթարկելու զազափարը կար, աշխարհաբար լեզուն իր վերջնական ձևը առնելէ վերջ: Կ'արժէ որ Հայ Աւետ. եկեղեցին ալ այս հարցը լրջօրէն նկատի առնէ, և եթէ կարելի է և փափաքելի է որ Առաք. եկեղեցւոյ հետ գործակցութեամբ անոր լուծում մը գտնէ:

ԼԵՃ ԲՆԱԿԸ ԵՒ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ

Լեհական բանակին մէջ գործող Բող. երէց մը «Լա Սըմէն Բէլիժիօզ» թերթին մէջ Լեհ զինուորական իշխանութեանց ազատամտութեան մասին իբր ապացոյց հետեւեալ տեղեկութիւնը կուտայ:

Լեհ բանակին մէջ 250000 զինուորներ կան, որոնց 7000ը Բողոքական են: Տասը Բող. երէցներ ասոնց կրօնական պետքերուն գոհացում կուտան. կառավարութիւնը 20000 օրինակ երգարաններ, ազօթազրքեր, Ս. Գրքի մասեր հայթայթած է Բող. զինուորներուն գործածութեան համար: Լեհաստանի մէջ նոր յարանուանութիւն մը կայ որ կը կոչուի «Աւետարանական Քրիստոնեաներ», որոնցմէ 500ը բանակին մէջ կը գտնուին: Ասոնց զաւանանքին համեմատ բռնի ոյժ գործածել կամ զէնք կրել ներկի չէ երբեք: Կառավարութիւնը յարգելով ասոնց պաշտօնը արտօնած է զանոնք ծառայել տալ բանակին ոչ-զինուորական գործերուն մէջ: Ասոնք զերծ են նաեւ զրօշին հաւատարիմ մնալու մասին պարտադրեալ երդումէն, որուն փոխարէն պարզ խոստում մը կուտան միայն: Փառք Լեհաստանին:

ԱՄԷՆ ՕՐ ԿԻՐԱԿԻ

Պօլշէվիկ Ռուսիան կրօնքի և մասնաւորապէս Քրիստոնեայ եկեղեցիին զէմ իր հալածանքը սաստկացուցած է, յուսալով չատ կարճ ատենուան մէջ ոչնչաց-

նել զանոնք և ժողովուրդը փրկել առնոց բռնակալութենէն: Այս նպատակին իրադործումին համար կառավարութիւնը հրամանագրով մը ամէն օրը գործի օր հռչակեց և կիրականօրեայ հանգիստը և կրօնական պաշտամունքը արգիլեց:

Համայնավար թերթ մը այս կարգադրութիւններուն ունեցած ազդեցութիւնը գրելով իր պարմանքը կը յայտնէ տեսնելով թէ քոլոր ջանքերը ճիշդ հակառակ արդիւնքներ կուտան: «Հիմա հետեւեալ խօսքերը կը լսենք Բողոքական հաւաքոյթներու մէջ,» կը գրէ Ռուս համայնավար թերթը, «Դուք ձեր նուէրները Տէրոջ կրնաք բերել որ օրը որ ձեզի հաճելի է և Աստուած պիտի օրհնէ ձեզ անոնց համար: Կիրակի օրը եթէ ազատ էք, Կիրակի օրը հոս եկէք, երեքշաբթի օրը եթէ ազատ էք նոյն օրը եկեք մեզի: Մեր չէնքին գոնեւր ամէն օր ձեր առջև բաց են առատուան ժամը 7 Էն մինչև իրիկուան ժամը հինգը:» Այս թերթը կը տեղեկացնէ նաեւ թէ Ժողովուրդին մէջ տեսարակներ կը ցրուին, որոնք ուշադրութեամբ կը ծալլուին և կը տարուին գործարանի բանուորներուն մէջ տարածուելու համար: Այդ թերթիկներու վրայ տպուած պատգամ մը բոլոր հաւատացեալները պաշտամունքի կը հրաւիրէ, յայտնելով թէ Կիրականօրեայ և միջշաբթային մասնակցութիւնը այս ժողովներուն միեւնոյն կրօնական արժէքը ունին:

ՓՍՐԻՋԻ ՄԷՋ ԿՐԾՆԱԿԱՆ ՏՍԱՍՐ

ՄԸ ԵՒՍ

Սըմեթ Վօսուա ֆրանսիերէն թերթը կը տեղեկացնէ. «Ֆրանսական կառավարութիւնը որ այնքան քիչ կը հետաքրքրուի Քրիստոնէութեամբ, Փարիզի մէջ մզկիթ մը շինել տուած էր. և հիմա, ըստածին համեմատ, կը ձեռնարկէ Պուտայական տաճարի մը շինութեան, 10 միլիօն ֆրանկ ծախսելով:

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Վեր. Կ. Յ. Յարութիւնեան Յունվ. 25-30ին այցելեց Աղեքսանդրէթի շըրջանին չորս եկեղեցիները, մասնաւոր հետաքրքրութեան և քննութեան առարկայ ընելով նաեւ դպրոցները: Այս բոլորէն առնուած տպաւորութիւնը եղած է քաջաւերական և ուրախացուցիչ: Պատ. Կ. Գըրգեաշարեան Աղեքսանդրէթի պաշտօնավարութեան կարճ շրջանին յաջող գործունէութիւն մը ունեցած է: Հոս եկեղեցիին մի քանի ոսկի ծախքով նորոգութեան կարօտ եւ թափուր սենեակ մը գործածելի ձեւին վերածած է կանանց յատուկ հաւաքոյթներ ունենալու, դպրոցին կողմանէ գործածուելու համար:

Պէյլանի մէջ, երեք տաճիկի վեր կը գործէ Պատ. Կ. Ալթունճեան, ֆարթըլի քարոզիչը, որուն այս կարճատեւ գործունէութիւնը շատ օգտակար եղած է: Փետր. 16ին Պատ. Ալթունճեան պիտի մեկնի ֆարթըլը, հոն վերըստանձնելու իր նախկին գործը:

Գըրգեաշարի եկեղեցիին մէջ Պատ. Գ. Թումանեան կը շարունակէ օգտակար կերպով յառաջ տանիլ եկեղեցիին գործը: Եկեղեցիին՝ հոս չորս օսմ. ոսկի ծախքով ներկել տուած է եկեղեցական շէնքին դուռն ու պատուհանները: Շըրջանային Գործադիր Մարմինը 20 օսմ. ոսկի յատկացուցած է դպրոցական նոր շէնքի մը շինութեան համար:

Բաց ի Պէյլանէն բոլոր եկեղեցիներու մէջ հազորդութիւն և մկրտութիւն կատարուած է. և ամէն եկեղեցի աւետարանչական նպատակի համար իր կարողութեան համեմատ դրամ տուած է:

Վեր. Ս. Ս. Մանուկեան որ Նոր Տաւրին և Ծնունդը Քէսապի մէջ անցուցած էր, կարճ ատենուան մը համար Հալէպ

գտնուելէ վերջ նոյն տեղը վերադարձած է, իրր աւետարանիչ գործելու համար:

Վեր. Մ. Փափազեան, որուն համար գրած էինք թէ դէպ ի Սուրիա ճամբայ ելած էր Ամերիկայէն, Յունվ. 7ին Լոնտոնի մէջ Քէնթըրպըրիի Արքեպս.ին հետ 50 վայրկեան տեւող տեսակցութիւն մը ունեցած է:

Բալիֆորնիոյ մէջ Փիսիփիս Սիուշ ալ Րիչմընէն Տր. Սուարց (SWARTS) իր տիկնոջ հետ Հալէպ այցելութեան առթիւ, Պոյզ Հայ Սքուլ հանդիպած և հոն աշակերտներուն խօսած է Յունվ. 29ին:

Պատ. Արամ Հատիտեան, Հալէպ, Համիտիէյի Հայ Աւետ. Եկեղեցիի օգնական հովիւը, Յունվ. 23 ին ամուսնացաւ Օր. Կայտա Յ. Հասրճեանի հետ: Պատկարարողութիւնը կատարուեցաւ Վեր. Կ. Քէթնճեանի կողմանէ, Լեզգիէյի Հայ. Աւետ. Եկեղեցիոյ մէջ, Վեր. Կ. Յարութիւնեանի նախագահութեան տակ: Տօքթ. Ծ. Մէրիլ խօսեցաւ «Քրիստոնեայ ընտանիքը» նիւթին վրայ, և Վեր. Ե. Հատիտեան օրհնութեան աղօթքը կատարեց: Եկեղեցին լցուած էր մեծ բազմութեամբ մը, որուն մասնաւոր ուշադրութիւնը գրաւեց այս բոլոր հանգիստութեան պարգոյթիւնը և ըրջութիւնը: Աւանդական կարգ մը աւելորդ սովորութիւններէ և ծախքերէ ազատ այս նոր ամուսնութիւնը կ'արժէ որ օրինակ մըլլայ մեր ժողովուրդին իր ունեցած առողջապահական և կենցաղադրական շահերուն համար:

Տօքթ. Ե. Հ. Խըլոբեան ամուսնացած է Պէյրութի մէջ, Յունվ. 24 ին. Օր. Մ. Գալբազեանի հետ, զուստը բնիկ Մալաշյի Տօքթ. Գալբազեանի:

Մեր սրտագին շնորհաւորումները այս նորապսակ ամուսնորուն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Uquas քարգլանուքիւն Չարչ Տիֆլնսի
գրուածներէն

ԳԼՈՒԽ Բ.

ԵՐԵՔ ՈԳՈՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԻՆԸ

«Է, տղաքս, բաւական է որքան աշխատեցաք,» գոչեց ծերունին, «այսօր Ծնունդ է, քիչ մըն ալ ֆէյֆ ընել պէտք է, պատուհանները փակեցէք, աստաւրկաները մէջտեղէն վերցուցէք, քիչ մը տեղ թող բացուի:»

Տղաք անմիջապէս կատարեցին իրենց տրուած հրամանը: Ու քանի մը վայրկեան ետքը վաճառատունը հաճելի հիւրանոցի մը փոխուած էր: Գետինը մաքուր աւելուած, աթոռները չարուած, կրակարանին ճոխ ջերմութիւնը, ու թէյի ու ֆէյֆերու անուշահոտութիւնները, մասնաւոր ժամադրութեան համաձայն զոյգ զոյգ ներս եկողներու մաքուր հագուստներն ու ճառագայթով զէմքերը, խոհարարին գոհ կերպարանքը, նուազողներու կարմիր երեսները, վարպետին երեք որդիներն ու իրենց տիկինները, փոքր ճուղողուն մանկաւորները, ու ամէնէն ետքն ալ Տիկին Ֆէյզիկինսի գոհ ու երջանիկ դիմադծին լեցուն ժպիտը որքան հրապուրիչ տեսարան մը կ'ընծայէին, այդ երանելի վաճառատան մէջ այդ վայրկեանին ամէն բան զրախտային երանութեան անուշիկ մի մանրաներկարը կը ներկայացնէր:

Նուազը սկսաւ, անոր յաջորդեց պարը, զոյգերը ծեր ու երիտասարդ, իրարու հետ կը զառնային անհոգ ու երջանիկ, թէյը, զանազան տեսակ ֆէյֆեր, մասնա-

ւոր անուշիկներ, ճոխ կերակուր, ամէն բան կատարեալ, ամէն բան առատ, ամէն ոք երջանիկ: . . .

. . . Ժամը տասնըմէկն էր, ոչ ոք զիտցաւ թէ ինչպէ՞ս չուտ անցան զիշերուն ժամերը, երբ Տիար և Տիկին Ֆէյզիկնս ամէնուն ձեռքերը թոթո ելով Ծնունդը շնորհաւորելէ վերջ վաճառատունէն մեկնեցան, նոյնպէս միւսներն ալ, ամէն ոք խիստ գոհ տպաւորութեան տակ զատուեցաւ Ծնունդի այդ զիշիկ երեկոյթէն:

Այս բոլորը Սքրուճի մտքին վրայ խիստ մեծ տպաւորութիւն մը թողուցին. որքան հետաքրքրութեամբ ան կը նայէր իր երիտասարդութեան առնուան անձին, զէպփրուն ու անձերուն:

«Որքան ծախքով այս երեկոյթը կըրնար սարքուիլ,» հարցոյց Ոգին:

Սքրուճ իր մտածումներէն սթափուելով «Ո՛հ,» ըսաւ, «կարեւորը ծախուած գրամին քանակը չէ, այլ այն քաղցր բնաւորութիւնը՝ որով վաճառատան տէրը ու իր կինը այնքան երջանկացոյցին հըրաւիրեալները:»

«Ի՞նչ աւելի թանկագին է, յիշմը թէ երջանկութիւնը,» հարցուց Ոգին մասնաւոր շեշտով մը:

Ու Սքրուճ չը կրցաւ պատասխանել, սիրտը կը նեղուէր, շատ շփոթած էր, ու գլխու պտոյտ կ'զգար:

«Ի՞նչ ունիս,» հարցուց Ոգին, «անհանգիստ ես:»

— «Ձէ, բայց . . . բայց . . .» կակաւեց Սքրուճ, «երանի թէ հիմայ իմ գրագիրս քովս ըլլար, որքան կը փափաքէի քանի մը անոյշ բառեր խօսիլ իրեն . . .»

(Շարունակելի)

(12)

صاحب الامتياز و مدير المسؤول

قيس قردب هاروتونيان